

ՎԵՐՋԱԲԱՆ

Նախկին ԽՍՀՄ-ի մի շարք շրջաններում 1980-ական թթ. մեծ մասշտաբներ էր ընդունել սեզոնային արտազնացությունը, որը դեռևս իրենից ներկայացնում էր տարերսային, չկարգավորվող և չդեկավարվող գործընթաց: Հայաստանից ամեն տարի արտազնացության էր մեկնում մոտավորապես 25-30 հազար մարդ:

Սեզոնային արտազնացությունը, լինելով ընդհանուր միգրացիոն գործընթացի բաղկացուցիչ մաս, որի հիմքում ընկած էր տարվա որոշակի ժամանակաշրջանում իրենց բնակավայրից ժամանակավոր դեպի այլեթնիկ միջավայր բնակչության ինքնական տեղափոխությունը, հիմնականում նպատակ էր հետապնդում բարելավելու մարդկանց նյութական դրությունը:

Բնակչության միատարր էթնիկական կազմի շնորհիվ արտազնացության պատկերը առավել ցայտուն է դրսևորվում Հայաստանում: Ուսումնասիրությունը հնաքավությունը ընձեռեց ինչպես ԽՍՀՄ-ի ազգային մի շարք շրջանների, այնպես էլ հանրապետության համար վեր հանել երևույթի զարգացման ընդհանուր և առանձնահատուկ մի շարք գծեր:

Նյութերի վերլուծությունից պարզվեց, որ արտազնացությունը Հայաստանում ունեցել է վաղեմի ավանդույթներ: Այն մեծ մասշտաբներ է ընդունել սկսած XIX դարի երկրորդ կեսից, որը պայմանավորված էր հայ գյուղներթափանցած կապիտալիստական հարաբերություններով և ազգային մի շարք գործոններով: Հայաստանը հիմնականում ագրարային երկիր էր. կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղում սկիզբ առած սոցիալական շերտավորման գործընթացը հանգեցրեց նրան, որ գյուղացիության մեծ մասը զբղվեց արտադրության միջոցներից և ստիպված էր աշխատանք փնտրել արդյունաբերական խառնուրդներում: Այն պայմանավորված էր

նաև Հայաստանի բնակչության ինչպես արհեստական, այնպես էլ բնական աճի տեմպերի ավելացմամբ, սակավահողությամբ, ցարական կառավարության հարկային քաղաքականության կիրառմամբ: Կարիքի և աղքատության պայմաններում արտազնացությունը հայ գյուղացու համար դառնում էր ընտանիքի նյութական նվազագույն պահանջմունքները թավարարելու կարևորագույն աղբյուր: Այդ գործընթացին մասնակցում էին նաև Արևելյան Հայաստանում ապրող այլեթնիկ խմբերը՝ քրդեր, ռուսներ, հույներ: Արտազնացության մասշտաբները մեծ էին նաև Արևմտյան Հայաստանում, որը գտնվում էր սուլթանական Թուրքիայի տիրապետության ներքո:

Արտազնացությունը այդ ժամանակաշրջանում պայմանավորված էր ինչպես բնական, այնպես էլ հասարակական գործոններով: Ըստ Հայաստանի գյուղական բնակչության հետ անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ փոխվել էին արտազնացության դրդապատճառների բնույթը և բովանդակությունը: Այդպիսիք էին «արտազնա աշխատանքի վայրում ավելի բարձր աշխատավարձ ստանալը», «տեղում համապատասխան աշխատանքի ռացակայությունը», «մեծ ծախսումների համար փող ձեռք բերելը»: Այդ համակարգում կարևոր տեղ էր զբաղում բնակաբանի կառուցման, հաքսանեկան արարողությունների և դատեր օժիտի, կենցաղային առարկաների՝ ավտոմեքենայի, կահույքի համար դրամական եկամուտների ձեռքբերումը: Նշված դրդապատճառներում (հատկապես վերջինում) ցայտուն դրսևորվում էր անհատի էթնիկ վարքագիծը: Արտազնացության խթանմանը նպաստել են նաև գյուղական բնակչության ընտանեկան կառուցվածքի առանձնահատկությունները և գյուղական շրջաններում կայուն կերպով պահպանվող մի շարք էթնիկ ավանդույթային ձևեր:

Արտագնացության դրդապատճառները, կապված նբանց տարիքային կազմի հետ, ունեն որոշակի առանձնահատկություններ: Դրանք բարդ կառուցվածք ունեցող ընտանիքների, ինչպես նաև ազգակցական և դրացիական սերտ կապերի առկայությունն են:

Պատմականորեն որոշակի փոփոխություններ են նկատվում արտագնացության ընդգրկման շառավիղների և ուղղվածության, նրանց կազմավորման աղբյուրների, ինչպես նաև սոցիալ-մասնագիտական կազմի և տնտրության ժամկետների միջև:

Անցյալում հիմնականում արտագնացության էին մեկնում արդյունաբերական-արհեստավորական խոշոր կենտրոններ՝ Բաքու, Թիֆլիս, Բաթումի, Գրոգնի, Ելիզավետպոլ, Աիջին Ասիա, Երրեմն նաև հեռավոր արտերկիր: Գյուղացիները, չկտրվելով գյուղատնտեսական աշխատանքներից, ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ դրանից դուրս իմբրովին կամ անհատապես արտագնացության էին մեկնում գյուղատնտեսական սեգոնի ավարտից հետո: Գյուղատնտեսության և շինարարության բնագավառում ընդգրկված աշխատողների աշխատանքային սեգոնը տևում էի մոտավորապես 5-7 ամիս, իսկ խոշոր արդյունաբերության բնագավառում ընդգրկվածներից՝ մի քանի տարի կամ էլ անվերադարձ: Նրանք, դառնալով արդյունաբերական ձեռնարկությունների կադրային րանվորներ, իրենց կապերը չէին իագում հայրենի գյուղի հետ:

Բացի գյուղացիներից, աշխատանքային շուկայի նեղացման պայմաններում արտագնացության էին մեկնում նաև արհեստավորները և իրենց արհեստները կիրառում այն վայրերում, որտեղ դրանց նկատմամբ պահանջ էի գգացվում: Որպես տաղածական շաբժունության կարևորագույն ձև՝ արտագնացությունը բնակչության որոշ մասին կապեց Անդրկովկասի մի շարք քաղաքների հետ, որոնք, րացի առևտրաարդյունաբերական խոշոր կենտրոններ լինելուց, համարվում էին ժամանակի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի խոշոր օջախներ: Այդ տեղաշարժերը ապահովեցին տարբեր էթնիկ հանրությունների՝ հայերի, վրացի-

ների, աղբբեջանցիների, ռուսների, պարսիկների և այլ ազգերի միջև ակտիվ տևական շփումներ: Դրանք մի կողմից նպաստեցին նրանց աշխարհայացքի ձևավորմանը և դասակարգային պայքարի համախմբմանը, մյուս կողմից՝ գյուղական կենցաղ ներմուծեցին քաղաքային կյանքին բնորոշ մի շարք տարրեր:

Ազգագրական նյութերի վերլուծությունից պարզվեց, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Զայաստանում տեղի ունեցած գանգվածային արտագնացությունը ոչ միայն արագացրեց արդեն սկիզբ առած նահապետական գերդաստանի քայքայման գործընթացը, այլև հանգեցրեց սոցիալական և էթնոժողովրդագրական մի շարք հետևանքների:

XX դարի 80-ական թթ. ընդլայնվեցին արտագնացության ուղիները. դրանք ընդգրկում էին ԽՍՀՄ-ի այն տարածքները, որտեղ գգացվում էի աշխատանքային ռեսուրսների իսիստ պակաս: Ըստ հետազոտության արդյունքների՝ այդպիսիք էին Ռուսաստանի հյուսիսային և արևելյան շրջանները, Ղազախստանը և այլն: Արտագնացության գործընթացին մասնակցել են տարբեր սոցիալ-մասնագիտական խմբեր. որակավորում չունեցող ֆիզիկական աշխատողներ, ոչ ինդուստրիալ և ինդուստրիալ ոլորտի որակավորում ունեցող ֆիզիկական աշխատանք կատարողներ, ծառայողներ, բարձր որակավորում ունեցող մտավոր աշխատանքով գբաղվողներ: Մի քանի սեգոն արտագնացության մեկնելուց հետո նշված սոցիալ-մասնագիտական խմբերում արդյունավետորեն տեղի էին ունենում ուղղահայաց և հորիզոնական շարժունության գործընթացներ՝ ուղեկցվելով որակավորում ունեցող ֆիզիկական աշխատողների թվաքանակի ավելացմամբ, ինչպես նաև շինարարական մորմասնագիտությունների ձեռքբերմամբ, որակավորման աստիճանի բարձրացմամբ:

Բացի սոցիալական հատկանիշներից, արտագնացության ընթացքում փոփոխվում էին նաև նրանց մշակութային-կենցաղային բնութագրերը: Այդ փոփոխությունները, որոնց հիմքում ընկած էին այլէթնիկ միջավայրում արտագնացների և տեղի բնակչության միջև

ակտիվ ու երկարաժամկետ շփումները, ընդգրկում էին՝

առաջին միջանձային ազգամիջյան հարաբերությունները,

երկրորդ՝ լեզվական գործընթացը,

երրորդ՝ սոցիոնորմատիվ մշակույթը,

չորրորդ՝ պրոֆեսիոնալ մշակույթը,

հինգերորդ՝ նյութական մշակույթի ոլորտները:

Նշված ոլորտներում ավանդականի և նորի, արժեքային կողմնորոշման փոփոխության, ազգային և ինտերնացիոնալ մշակույթի սպառման վրա իրենց ազդեցությունն էին թողնում արտագնացի տարիքային առանձնահատկությունները, կրթական մակարդակը, արտագնացության տևողությունը, շփումների արդյունավետությունը և ընկալը:

Սրանով հանդերձ՝ արտագնացությունը լուրջ պատճառ կարող էի լինել ընտանիքի հիմքերի քայքայման համար, որի հետևանքով գյուղական ընկալության շրջանում հետզհետե աճում էի ամուսնալուծությունների, անկայուն և լքված ընտանիքների թվաքանակը:

Արտագնացությունը ստեղծում էի նաև իրական նախապայմաններ հանրապետությունից դուրս ընկալության մեխանիկական հոսքի ձևավորման համար: Ժողովրդագրական առումով այն Հայաստանում ընկալության միգրացիոն հաշվեկշռում հանգեցնում էր ռացասական մնացորդի:

Ինչպես ամրոդջ ԽՍՀՄ-ի, այնպես էլ հանրապետության ժողովրդական տնտեսության տեսանկյունից արտագնացության գործընթացի գնահատմանը չպետք է ցուցարներել միանշանակ մոտեցում: Մասնագետների վկայությամբ, մինչև երկրաշարժը Հայաստանի արտագնացների 55%-ը մշտապես զրադված չի եղել հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ, իսկ 20%-ը զրադված է եղել ժամանակավորապես¹: Այդ իսկ պատճառով հանրապետությունում սեզոնային արտագնա աշխատանքը դարձել էր աշխատանքային ռեսուրսների օգտագործման կարևորագույն միջոց, քանի որ նպաստում էի հասարակական արտադրության մեջ զրադված աշխատողների թվաքանակի ավելացմանը:

տողների թվաքանակի ավելացմանը²: Այնուամենայնիվ, հետազոտության արդյունքներից պարզվեց, որ արտագնացության ընթացքում տեղի էի ունենում նաև հասարակական արտադրությունից որակյալ աշխատուժի մի մասի հոսունություն: Դա առավել ցայտուն էի դրսևորվում գյուղատնտեսության (23%), շինարարության, տրանսպորտի ընագավառներում (19%), որտեղ աշխատանքային առավել եռուն ժամանակաշրջանում (գարուն-աշուն) զգացվում էի որակյալ աշխատանքային կադրերի մեծ պակաս: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ, ըստ Աշխատանքի պետական կոմիտեի տվյալների, 1984թ. ժողովրդական տնտեսության մեջ 26 մասնագիտությունների գծով պահանջվել էին 27,6 հազար որակյալ կադրեր³, ներառյալ՝ 7-8 հազար որակյալ շինարար: Անշուշտ, այս բոլորը ռացասարար են անդրադարձել Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր տեմպերի վրա, սակայն մյուս կողմից՝ հանրապետության արտագնացները կարևոր դեր ունեին նախկին ԽՍՀՄ-ի հյուսիսային և արևելյան շրջանների տնտեսական յուրացման, ինչպես նաև սոցիալական կառուցվածքի ստեղծման գործում: Նշված շրջանների դեկավարներին արտագնա խմբերը գրավում էին տարբեր պատճառներով: Հայտնի է, որ դեռևս այդ շրջաններում շարունակվում էին գյուղական ընկալության միգրացիաները դեպի քաղաք: Սրան պետք է հավելել, որ շինարարական և գյուղատնտեսական սեզոնների համընկնելու հետևանքով ռացակայում էին նաև աշխատուժի ներքին ռեզերվները⁴: Այս իրավիճակում այդ շրջանները շինարար մասնագետների մեծ կարիք էին գգում: Արտագնացները հիմնականում ընդգրկվում էին շինարարական աշխատանքներում. կառուցում էին ճանապարհներ, ընկարաններ, ֆերմաներ, մշակութային-կենցաղային օբյեկտներ: Նրանք փոքր խմբերով կատարում էին մեծ ծավալի շինարարական աշխատանքներ և

² *Адонц М.А., Давтян Л.М.* и др., указ. соч., с. 108.

³ *Икиликян Г.*, Размещение производства в трудозбыточных районах. — Социалистический труд, N4, 1985, с. 69.

⁴ *Бровин А.*, указ. соч., с. 80.

¹ «Известия», 15. 04. 1986 г.

կառուցում 2-3 անգամ ավելի արագ, քան տեղի շինարարները: Օրինակ՝ միայն Ալթայի երկրամասում նրանք կատարել են ամբողջ շինարարական ծրագրերի 60%-ը¹: Սիբիրում արտագնացների կատարած աշխատանքի մասին է վկայում նաև այն փաստը, որ տեղի արտադրական ծրագրերի 2/3-ն իրականացվում էր ապրիլից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում²:

Թերևս այս է պատճառը, որ 1986թ. մայիսի 15-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած՝ «Ժամանակավոր շինարարական բրիգադների կազմակերպման և աշխատավարձի կարգի մասին» որոշման մեջ, քննարկելով արտագնացության հետ կապված մի շարք հարցեր, մասնավորապես նշվեց. «...նրանց գործունեության ճիշտ կազմակերպման դեպքում որոշակի ներդրում կլինի տնտեսական, բնակարանային և մշակութային-կենցաղային օբյեկտների շինարարության ոլորտում»³:

Ըստ Հայաստանի պետականին աղընթեր էկոնոմիկայի և արդյունաբերության գիտահետազոտական ինստիտուտի տվյալների՝ հանրապետությունից մեկնող 25-30 հազար արտագնաց սեզոնի ընթացքում նախահաշվարկային արժեքով կատարում էր 510-540 մլն ռուբլու աշխատանք⁴: Մինչդեռ Հայաստանում 1984թ. կատարված շինարարական վերանորոգման ընդհանուր աշխատանքների գումարը կազմել է 930 մլն ռուբլի⁵: Բերված վիճակագրական տվյալներից կարող ենք եզրակացնել, որ արտագնացները շինարարական մեծ ծավալի աշխատանքներ կարող էին կատարել Հայաստանի երկրաշարժի գոտու վերականգնման գործում: Արտագնացների կատարած աշխատանքի տնտեսական արդյունավետության համար կարևոր նախա-

պայման էր նաև այն, որ նրանք շինարարության բնագավառում կարող էին ընդգրկված լինել ոչ թե տարվա որոշակի սեզոնին, այլ ամբողջ տարվա ընթացքում: Սա նաև հնարավորություն կտար արտագնացներին աշխատանք ձեռք բերելու համար չկորցնել զգալի միջոցներ և ժամանակ: Արտագնացները, տիրապետելով շինարարական մի շարք մասնագիտությունների, կարող էին կառուցել ազգային ճարտարապետության ավանդույթներին համապատասխան օբյեկտներ: Այլ բան, որը հաճախ րացակայում էր դրսից բերված աշխատուժի մոտ: Երկրաշարժից հետո, ելնելով հայրենասիրական գգացումներից, ինչպես նաև հսկայածավալ շինարարական աշխատանքների առկայությունից, արտագնացների որոշ մասը նույնիսկ ցածր աշխատավարձի պայմաններում ցանկություն էր հայտնել մնալ տեղում: Սակայն սկզբնական շրջանում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ճիշտ չկազմակերպվեց այդ աշխատուժի նպատակասլաց օգտագործումը:

Նախ՝ այդ գործընթացը պետական վերահսկողության հաստատման կարիք ուներ, որտեղ մեծ դեր պետք է կատարեր Աշխատանքի պետական կոմիտեն⁶:

Երկրորդ՝ Աշխատանքի պետական կոմիտեն Հայաստանի տարբեր շրջաններում պետք է կազմակերպեր արտագնացությանը մասնակցող անձանց հաշվառումը, որտեղ պետք է նշված լինեին արտագնա խմբերի սոցիալ-մասնագիտական բնութագրերը, աշխատանքի հնարավոր ընդգրկման ժամկետները:

¹ Шабанова М.А., указ. соч., с. 49.

² Мищенко В.В., Социальные проблемы сельского строительства.—В кн. Современное развитие Сибирского села: Опыт социологического изучения (Под ред. Хахулиной Л.Л.), Новосибирск, 1983, с. 143.

³ Об упорядочении организации и оплаты труда временных строительных бригад. Постановление Совета Министров СССР от 15.05 1986 г., N 576. Собрание постановлений правительства СССР, N 23, с. 399-402.

⁴ Адоиц М.А., Давтян Л.М. и др., указ. соч., с. 110.

⁵ Народное хозяйство Арм. ССР в 1985 г. Статистический ежегодник, Е., 1986, с. 146.

⁶ 1989թ. օգոստոսին Հայկական ԽՍՀ Նախարարների խորհուրդը քննարկեց «Հայկական ԽՍՀ-ից այս անձանց երկրաշարժի գոտի ուղարկելու հարցը, որոնք ցանկություն են հայտնել մասնակցելու շինարարական և վերականգնման աշխատանքներին» հարցը, որով համապատասխան կազմակերպություններին հանձնարարվում էր քաղաքներում և գյուղերում, այդ թվում՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից զանգվածային ներգաղթի հետևանքով հանրապետություն ժամանած, ինչպես նաև անհատական կարգով հանրապետության սահմաններից դուրս սեզոնային աշխատանքի մեկնող անձանց թվաքանակի կազմակերպված հավաքագրման կարգով ընտրել շինարարական արհեստների տիրապետող քանվորների, ըստ որոշման՝ նրանց տրվելու էին նաև մի շարք արտոնություններ: Տե՛ս «Երեկոյան Երևան», 5.08. 1989թ.:

Երրորդ՝ միութենական հանրապետությունների շինարարական կազմակերպությունները երկրաշարժի գոտում կատարվող աշխատանքներում դրսից բերվածի հետ առաջին հերթին պետք է ընդգրկելին տեղի ազատ աշխատուժը: Դրա համար նրանք մախօրոք պետք է կազմեն շինարարական օբյեկտների կառուցման վերաբերյալ մախնական հայտեր, որտեղ պետք է ներառվեն դրանց մախագծային արժեքը, կատարման ժամկետները, աշխատանքի ծավալը և ապաներկայացվեր Աշխատանքի պետական կոմիտե: Այն իր հերթին շրջանային համապատասխան օրգանների միջոցով այդ տվյալները պետք է հասցներ արտագնա խմբերին, և կատարվող աշխատանքի վերաբերյալ ձևակերպվեր պաշտոնական պայմանագիր: Այսպիսով, Աշխատանքի պետական կոմիտեն պետք է կատարեր համախմբման կենտրոնի և միջնորդության բյուրոյի գործառույթ՝ դրա ռիմաց ստանալով արտագնացների կողմից կառուցվող օբյեկտի մախագծային արժեքի որոշ տոկոսներ: Աշխատանքի կազմակերպման այս ձևը հնարավորություն կտար մակնընտրելու կառուցվող օբյեկտների կարևորությունը, հերթականությունը և այլն¹:

Հայաստանում արտագնացության տեմպերի հետագու կրճատման և սահմանափակման գործում կարևոր էի մակ լեռնային և մախալեռնային շրջաններում բնակչության զբաղվածության բարձրացումը՝ սոցիալ-տնտեսական զարգացման կուրսի իրականացումը: Այդ խնդրի լուծման համար աշխատանքային ռեսուրսներով հարուստ շրջաններում ան-

հրաժեշտ են արտադրական մոր մասնաճյուղեր: Օրինակ՝ ըստ Աշխատանքի պետական կոմիտեի տվյալների՝ 1984թ. հունվարի 1-ի դրությամբ միայն ՀԽՍՀ թեթև արդյունաբերության մախարարությունը տարբեր շրջաններում բացել էր 151 մասնաճյուղ²: Բայց պետք է նշել, որ հաճախ ման մասնաճյուղեր բացելիս հաշվո՝ չէին առնվում տղամարդու աշխատուժի կիրառման ոլորտները, և հիմնական շեշտը դրվում էր տնային և անձնական օժանդակ տնտեսություններում զբաղված կանանց աշխատուժի վրա³: Այն հարցին, թե «ինչ պայմաններում կղադարեք արտագնա աշխատանքի մեկնելուց», արտագնացների 81%-ը տեղում համապատասխան աշխատանք ունենալու հետ նշել էր մակ բարձր աշխատավարձ ստանալու հանգամանք: Բարձր աշխատավարձ նրանք համարում էին ամսեկան 350-450 ռուբլին: 18-29 տարեկան արտագնացները դրանց ավելացնում էին՝ «Երիտասարդության համար հանգստի լավ պայմանների ստեղծումը»: Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի ժուրվրդական տնտեսության մեջ այդ կադրերի ամրապնդման գործում էական դեր կարող էի կատարել ոչ միայն տեղում աշխատանքի աոկայությունը, այլև կարևոր էին աշխատավարձի չափերը, ինչպես մակ անհաուի մշակութային գործունեության համար մշակութային-կենցաղային պայմանների ստեղծումը:

Այդ շրջանում ընակչության լրիվ զբաղվածության և արտագնացության տեմպերի կրճատման գործում, ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ շինարարության բնագավաոում, մեծ դեր կարող էի կատարել բրիգադային կապալի ներդրումը: Եթե գյուղատնտեսության բնագավաոում բրիգադային կապալն արդեն արմատավորվել էի, ապա մույնը չենք կարող ասել շինարարության բնագավաոի մասին, որտեղ բրիգադային կապալի օգտագործումը կտադ ցանկալի արդյունք, քանի որ արտագնացները, լինելով որակավորում ունեցող շինարարներ, տեղում

¹ Արտագնացության տարերային ընույթի հետագա կարգավորման և սահմանափակման համար աշխատանքի կազմակերպման այս ձևը կարելի էր կիրառել ամբողջ ԽՍՀ-ի մասշտաբներով, որտեղ եամախմբման կենտրոնի և միջնորդության գործառույթ կարող է կատարել ԽՍՀ Աշխատանքի պետական կոմիտեն: Տե՛ս *Адои М.А. Дагтян Л.М. и др., указ. соч., с. 112-115*: Այդ գործում կարևոր էր մակ կատարել մակ արտագնացների և շինարարական կազմակերպությունների միջև երկարաժամկետ պայմանագրերի կնքումը: Նման դեպքում աշխատանքային ռեսուրսների կարիք ունեցող փրիրյան կոլտնտեսությունները և սովխոզները որոշակի ժամանակահավածի համար կսամային որակյալ շինարարներով ապահովելու համար ամուր երաշխավորություն, իսկ արտագնացները երկար տարիներ կարող էին աշխատել միևնույն շրջանում: Սանրամասն տե՛ս *Шабанова М.А., указ. соч., с. 69*:

² *Икпикян Г., указ. соч., с. 69.*

³ Там же, с. 69.

կարող էին ապահովել շինարարական օբյեկտների կառուցման բարձր տեմպեր:

Չեռանկարային առումով արտագնացության տեմպերը կարող էին կրճատվել նաև ինչպես Հայաստանում, այնպես էլ մյուս հանրապետություններում, նոր տնտեսական մեխանիզմի՝ տարածքային տնտեսական կառուցվածքի, որն ուղեկցվում էր գիտատեխնիկական առաջընթացով, աշխատուժի կարիք ունեցող հանրապետություններում և տնտեսական շրջաններում կարող էր լրացվել ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներից ազատվող աշխատուժի հաշվին: Սա գալիս էր մեղմացնող գործոն կծառայեր արտագնացության աշխարհագրական շրջաններում: Այդ աշխատանքային ռեսուրսները արտագնա աշխատանքի վայրում համապա-

տասիան կիրառում չգտնելու հետևանքով կարող էին վերադառնալ իրենց տները: Ելնելով դրանից՝ հանրապետության համապատասխան մարմինները նրանց զբաղվածության համար նախօրոք պետք է ստեղծեին նոր աշխատանքային ոլորտներ¹:

Որպես բարդ սոցիալ-տնտեսական երևույթ՝ արտագնացության հետագա կարգավորման և պլանավորման համար ոչ միայն գոտ տնտեսական գործոնների, այլև էթնիկ առանձնահատկությունների վերլուծության անհրաժեշտություն է զգացվում: Այն ունի հարաբերական ինքնուրույնություն և կարող է ազդել ընակչության զբաղվածության ու շարժունության, սոցիալ-մասնագիտական կազմի, ընտանիքի չափերի և կառուցվածքի, միգրացիայի արդյունավետության և ուղղվածության վրա:

¹ Տե՛ս «Երեկոյան Երևան», 22.06. 1989թ.: